

ԶԳՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐԵՎՈՐԴԻՔ

Առաջին հայ աղանդը

Հայոց պատմության մեջ ս. Նահակ-Մեսրոպի ժամանակեն մինչև Ներսես Շնորհալիին օրերը՝ ատեն ատեն կհիշվին մի քանի աղանդներ և աղանդավորներ՝ **Բորբորիտոնք, Մծղնյայք, Պավղիկյանք-Պայլիկյանք, Թոնդրակեցվոց** աղանդ և **Արևորդիք:**

Ըստ հ. Ղ. Ալիշանի ասոնք «գրեթե ամենքն ալ խառն և նման այլանդակ վարդապետություն կամ սովորություններ ունեին, կրնանք ըսել թե, որոնք ի ստուգութենե հավատոց և ի սրբութենե վարուց դուրս կցատկեին՝ վերջը վերջը ի նույն այլանդակություն կերթային միանային»[1]:

Աղանդներու հասարակաց այս ընդհանուր բնորոշումեն չի հետևիր թե անոնցմե յուրաքանչյուրն՝ ինչպես իր հատուկ անունովը, տեղովն ու ժամանակովը նույնպես նաև նկարագիրովը տարբեր չէր մյուսներեն, թեև իր հավատալիքը, պաշտամունքն ու սովորությունները երբեմն նման և որոշ չափով ալ խառնված լինին մյուսներուն՝ իրարու հետ շփոթվելու աստիճան:

Այսպես է պարագան Արևորդիներուն, որոնք ըստ Ներսես Շնորհալի հայրապետին՝ «ազգով և լեզվով հայոց տոհմեն են»[2]:

Արևորդիք հայոց մեջ գլուխ բռնող աղանդավորներեն ամենեն հինը և առաջինն են, որ ս. Գրիգոր Լուսավորչի քարոզության ատեն զատվելով քրիստոնեությունը որպես պետական կրոնք ընդունող հայ ամբողջությենեն, զայն կմերժեն և հարած կը մնան հեթանոսական հավատքին մինչև ԺԲ դարը՝ Ներսես Շնորհալիին օրերը:

Այսուհանդերձ Արևորդիք դարեր շարունակ շփումի մեջ լինելով իրենցմե չեղող հայերուն, մասնավորապես հայոց մեջ հետզհետե երևցող աղանդավորներուն հետ, զերծ չեն մնար անոնց քրիստոնեական ազդեցությենեն:

Արևորդիք մինչև իսկ իրենք զիրենք քրիստոնյա կանվանեն:

Գրիգոր Մագիստրոս (+1059) իշխանը երբ կպայքարի Մանազկերտի (Միջագետք) շրջանը գտնվող Թոնդրակեցի աղանդավորներուն դեմ, սապես կարտահայտվի անոնց մասին.

«Արեգակնապաշտք, զոր Արեւորդիսն անուանեն... ինքեանք՝ քրիստոնեայս զինքեանս յայտնապէս կոչեն, բայց եթէ որպիսի մոլորութեամբ և անառակութեամբ վարին՝ գիտեմք»[3]:

Նկատելի է որ Ն. Շնորհալին Արևորդյայց դարձին համար տված իր հրահանգներուն կարգին կնշե անոնցմե ոմանց մկրտված լինելը և կպատվիրե.

«Անոնք որ կանխավ մկրտված են արդեն, անոնցմե միայն խոստովանություն առեք, անոնց վրա ապաշխարություն դրեք, ապա սուրբ մյուռոնով դրոշմեցեք անոնց ճակատներն ու զգայարանները՝ հանուն

[1] **Հ. Ղ. Մ. Ալիշան,** Շնորհալի և Պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 399:

[2] **Ներսես Շնորհալի,** Թուղթք Ընդհանրական, Վենետիկ, 1873, էջ 239:

[3] **Ալիշան,** անդ, էջ 400 (մեջբերումը Գրիգոր Մագիստրոսեն):

Հոր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, ու հետի խառնեցեք Քրիստոսի հոտին»[4]:

Արևորդիներուն դարձը

Արևորդիք՝ Թոնդրակեցվոց աղանդին պես, առավելաբար խմբված կերևին Հայաստանի հարավային սահմանամերձ մասերուն վրա: Անոնց կեդրոնն է Ասորվոց Միջագետքի Սամոստիա քաղաքը:

ԺԲ դարու երկրորդ կեսին Սամոստիայի Արևորդիք կուզեն դարձի գալ և ընդունիլ քրիստոնեությունը: Այս նպատակով Արևորդիք կդիմեն Սամոստիայի առաջնորդ Թորոս քորեպիսկոպոսին և իշխան Գազանին խնդրելով որ միջնորդեն հայոց կաթողիկոսին մոտ իրենց դարձին համար: Քորեպիսկոպոսն ու իշխանը գիրով մը Արևորդյաց դարձի խնդրանքը կմատուցանեն Ներսես Շնորհալի կաթողիկոսին (1166—1173) անկե ուղղություն և հրահանգ առնելու համար: Նույն ատեն Արևորդիք իրենց կարգին մասնավոր պատվիրակությամբ կներկայանան հայոց հայրապետին, և կհայտնեն հեթանոսութենե իսպառ հրաժարելու և քրիստոնեություն ընդունելու իրենց փափաքը:

Շնորհալի հայրապետը սիրով կընդառաջե կատարված միջնորդության և խնդրանքներուն: Ան անձամբ կառնե իրեն ներկայացող Արևորդյաց պատվիրակներուն հեթանոսությունն ուրանալու և քրիստոնեություն ընդունելու երդումներն ու հավատիքը:

Այս առիթով Ներսես Կլայեցին Սամոստիայի առաջնորդին, քահանաներուն, իշխանին և ժողովուրդին կուղղե մասնավոր համակ մը—**Թուղթ ի Սամոստիա քաղաք, յաղագս Արեւորդեացն դարձի,** ուր կհիշե իրեն եղած գրավոր և անձնական դիմումները, կանդրադառնա Արևորդյաց աղանդին ծագումին, զանոնք կնմանցնե ժամանակակից Հոռոմ (հույն) Պողոմելյան* սատանայական աղանդին և կհայտնե Արևորդիներն եկեղեցին ընդունելու իր հոժարությունը համաձայն տերունական բանին թե «Որ գայ առ իս ոչ հանից արտաքս»[5] և «Քանզի կամի Աստուած զամենայն մարդիկ զի կեցցեն և ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն ըստ առաքելոյ»[6]:

Շնորհալի այս թուղթը Սամոստիա կուղարկե իր աշակերտներեն ընտիր խումբի մը հետ, որ միանալով տեղվույն քահանայական դասին և ժողովուրդին միասին պաշտոնապես կատարեն Արևորդյաց հեթանոսութենե հրաժարելուն և քրիստոնեություն ընդունելուն հանդիսավոր արարողությունը քաղաքին մեծ եկեղեցիին մեջ[7]:

Արևորդյաց հավատալիքները

Արևորդիներու աղանդին հատուկ պաշտամունքի, ծեսի և դավանանքի մասին (եթե ունեին) աղբյուրներ կպակսին:

Անոնց հավատալիքներուն և սովորություններուն վրա շատեն քիչ գաղափար մը կուտա Շնորհալիի ԹՈՒՂԹ Ի ՍԱՄՈՍՏԻԱ, ՅԱՂԱԳՍ ԱՐԵՒՈՐԴԵԱՑՆ ԴԱՐՁԻՆ[8]:

Այստեղ կամփոփենք այդ հիշատակությունները քաղվածաբար, զանց ընելով Արևորդիներու դարձին և ուսուցմունքին վերաբերող Շնորհալիի տված հրահանգները:

—Սատանա, սատանայական խորհուրդ, խոսք և գործք: Ասոնցմե պետք են հրաժարիլ և զանոնք անարգել հրապարակով: Թքնելու է երեսը սատանային «որպէս զպիղծ և զսուտ և զանիրաւ»[9]:

Արեգակը,—զոր պաշտելուն համար սույն աղանդավորները կկոչվին Արևորդի (արևի որդի, արևի զավակ) ավելի բան չհարիլ քան հրաց աշխարհի, զոր Աստված կատեղծե լուսինի և աստղերու պես՝ իբր լուսատու միայն:

Բարդի ծառը՝ զոր կռապաշտները կրպատվեին կարծելով որ անոր մեջ դևերը կմտնեին պաշտոն և երկրպագություն ընդունելու համար: Բարդին ավելի չպատվել բան ուռին, կաղամախին և մյուս ծառերը:

Դիվական բժշկանք, կախարդական դեղեր, տուփ և կապոց, զորս ոմանք կառնեն կամ կկրեն իրենց վրա՝ զերծ մնալու համար պատահական չարիքե, բուժվելու համար վախե, լուսնոտութենե, ջերմե, դողե և այլ հիվանդություններե:

Կախարդություն, դեղատվություն, դիվական աղանդավորություն, բժշկագործություն, պիղծ և աղտեղի բաներ կերակուրի

---

[4] **Շնորհալի**, անդ, էջ 247:

* Պողոմելյան կամ Պողոմելոսք Հոռոմ էին: Հեթանոսական ծագում ունին: Հավատքով և անատակ սովորություններով կնմանեին Պավղիկյան և Մանիքյան աղանդներուն: Անոնք բուլղար բոկոմներն են: ԺԲ դարուն Պողոմելյան աղանդը, որուն պետքն է Վասիլ, կդատապարտվի Կ. Պոլիս գումարված երեք ժողովներով (1143, 1144 և 1147) և հույն պատրիարքին կանոնական գիրերովը (Ակիշան, «Շնորհալի եւ պարագայ իւր», էջ 401: Օրմանյան, «Ազգապատում», Ա, հոդ. 978):

[5] Հովհան. 9 37:

[6] Ա Տիմ. Բ 4:

[7] **Շնորհալի**, անդ, էջ 238—253:

[8] Անդ, էջ 238:

[9] Անդ, էջ 242:

և ըմպելիքի հետ խառնելն ու գործածելը, զանոնք ուտել խմելը կամ կերցնելն ու խմցնելը, որոնք առավելաբար կշեշտվին կանանց մոտ, պետք է մեկդի թողուլ իբր դիվական խաբեություն:

Այս կարգի մոլորություններուն հետևողներն ու հավատացողները արժանի չհամարել սուրբ Հաղորդության և քրիստոնեական թաղումի:

Արևորդիներու սնապաշտական այս և նման հավատալիքները դեռ կան Եզիտի և Շեմսի կոչվող աղանդներուն մեջ:

Արևորդիներուն արձագանքը

Արևորդիներու մասին պատմությունը քիչ անգամ կխոսի:

Հովհան Օձնեցի (717—728) Ընդդեմ Պավղիկյանց ճառին մեջ կկշտամբե նաև Արևորդիները: Վերև մեջ բերինք Գրիգոր Մագիստրոսի ակնարկությունը: Ներսես Շնորհալին կգրե. «Արևորդիք մեր ազգին մեջ սատանայական խավարին մեջ մնացողներն են. անոնք չուզեցին լուսավորվիլ մեր լուսավորչին ս. Գրիգորի միջոցով եղած աստվածային լույսով, այլ սիրեցին խավարը և ոչ լույսը մինչև այսօրվան ժամանակը»[10]:

Արևելյան վարդապետներեն ուսումնականի հռչակ ունեցող Դավիթ Ալավկա Որդի (+1130) Արևորդիները կնույնացնե Պավղիկյաններուն հետ և զանոնք կկոչե Արուի Որդի*:

Ուշագրավ է Դավիթ Սալնաձորեցի տաղասացի սա քառյակը ԺԵ դարեն

Սինձ, երիցուկն ու եղերդակն
Կու ըսպասեն Արեւորդուն.
Նոցա երամն ուրիշ է
Կու շրջին զօրն հետ արեւուն[11]:

Արևորդիներուն վախճանը

Շնորհալիին օրով Սամոստիայի մեջ կատարված դարձը վախճանը չէ Արևորդիներու աղանդին: Անոնցմե ոմանք հավատարիմ իրենց նախնիքներու հավատալիքներուն կխառնվին Թլկուրանի իշխանության մեջ գտնվող Ամայքի և Շպղթանի հայ աղանդավորներուն, որոնք ազգային եկեղեցիեն անջատված չնկատվելու համար, առանձին անուն մը չեն սեպիականեր, բայց դիրք կբռնեն և առիթ կուտան որ Անյուծ իշխանին միջնորդությամբ՝ Գրիգոր Գ Պահլավունիի հրամանով՝ Ներսես Շնորհալի զգուշացնող հորդորական մը գրե ուղղված Ամայքի և Շպղթանի Արևորդիներուն համակիր քահանաներուն[12]:

Հայաստանի մութ անկյուններուն և Ասորական Միջագետքի մեջ տակավին կերևին հետքերը Արևորդիներու նախապաշարումներուն:

Ներկայիս Հայաստան և Թուրքիա բնակող Եզտի և Միջագետքի Շեմսի կոչվող աղանդներուն մոտ դեռ կտեսնվին Արևորդիներուն հավատալիքները:

Ուստի անհավանական չէ ենթադրել որ հայ Արևորդիներուն թափթփուկները խառնված և ձուլված լինին Եզտի և Շեմսի իսլամական աղանդներուն մեջ:

---

* Արդյոք **Արուի Որդի** կոչումը կրնա՞ առնչվիլ գրադաշտական հին պարսիկներու ցեղական ԱՐԻ (որ և **Իրան**) անունին հետ, անոնց գերազանցրեն արևապաշտ ճանչցվելուն պատճառով:

[10] **Շնորհալի**, անդ, էջ 239:

[11] **Ալիշան**, անդ, էջ 404:

[12] **Օրմանյան Մ.**, Ազգապատում, Ա, հդ. 946, Կ. Պոլիս, 1912: